



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԴԽ-31-Ո-74
2018թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏՈՒՄ ԴԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ, ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿԸ ԵՎ ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասը, 89-րդ հոդվածի 1-ին մասի 33-րդ կետը, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը, «Դատական դեպարտամենտում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ, 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 12-րդ և 39-րդ հոդվածները, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ և 6-րդ հոդվածները, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասը և Հայաստանի Հանրապետության Բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի հուլիսի 12-ի ԲԴԽ-25-Ո-58 որոշումը՝ Հայաստանի Հանրապետության Բարձրագույն դատական խորհուրդը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտում դատական ծառայության պաշտոնների անվանացանկը և հաստիքների քանակը՝ համաձայն [1-ին հավելվածի](#):

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտում դատական կարգադրիչների ծառայության պաշտոնների անվանացանկը և հաստիքների քանակը՝ համաձայն [2-րդ հավելվածի](#):

3. Հաստատել Հայաստանի Հանրապետության Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտում քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը և հաստիքների քանակը՝ համաձայն [3-րդ հավելվածի](#):

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ սույն որոշման 5-7-րդ կետերով նախատեսված դեպքերի:

5. Սույն որոշման 1-ին հավելվածում՝

1) 6-րդ, 19-րդ, 35-րդ, 41-րդ, 57-րդ, 73-րդ, 80-րդ, 99-րդ, 114-րդ, 126-րդ և 142-րդ կետերն ուժի մեջ են մտնում 2019 թվականի հունվարի 1-ից:

2) 2-5-րդ, 37-40-րդ և 42-51-րդ կետերով նախատեսված պաշտոնների համար սահմանվող պաշտոնների խմբերը և ենթախմբերը կիրառելի համարել 2019 թվականի հունվարի 1-ից, մինչ այդ համապատասխանաբար կիրառվում են՝

- 2-5-րդ կետերով նախատեսված պաշտոնների համար՝ «գլխավոր, 2-րդ»,
- 37-40-րդ և 42-51-րդ կետերով նախատեսված պաշտոնների համար՝ «առաջատար, 1-ին» պաշտոնների խմբերը և ենթախմբերը:

6. Սույն որոշման 2-րդ հավելվածի 4-144-րդ կետերով նախատեսված պաշտոնների համար սահմանվող պաշտոնների խմբերը և ենթախմբերը կիրառելի համարել 2019 թվականի հունվարի 1-ից, մինչ այդ համապատասխանաբար կիրառվում են՝

- 4-րդ կետով նախատեսված պաշտոնի համար՝ «առաջատար, 1-ին»,
- 5-26-րդ և 42-րդ կետերով նախատեսված պաշտոնների համար՝ «առաջատար, 2-րդ»,
- 27-41-րդ և 43-98-րդ կետերով նախատեսված պաշտոնների համար՝ «կրտսեր, 1-ին»,
- 99-144-րդ կետերով նախատեսված պաշտոնների համար՝ «կրտսեր, 2-րդ» պաշտոնների խմբերը և ենթախմբերը:

7. Սույն որոշման 3-րդ հավելվածում՝

1) 24-րդ և 86-րդ կետերն ուժի մեջ են մտնում 2019 թվականի հունվարի 1-ից.

2) 67-րդ կետն ուժի մեջ է մտնում 2019 թվականի փետրվարի 1-ից.

3) 87-108-րդ կետերով նախատեսված պաշտոնների համար սահմանվող «մասնագիտական, 2-րդ» պաշտոնի խումբը և ենթախումբը կիրառելի համարել 2019 թվականի հունվարի 1-ից, մինչ այդ կիրառվում է «մասնագիտական, 3-րդ» պաշտոնի խումբը և ենթախումբը.

4) 48-րդ, 49-րդ, 111-115-րդ, 124-րդ և 125-րդ կետերով նախատեսված պաշտոնների համար սահմանվող պաշտոնների խմբերը և ենթախմբերը կիրառելի համարել 2019 թվականի հունվարի 1-ից, մինչ այդ համապատասխանաբար կիրառվում են՝

- 48-րդ և 49-րդ կետերով նախատեսված պաշտոնների համար՝ «ղեկավար, 5-րդ»,
- 111-րդ և 112-րդ կետերով նախատեսված պաշտոնների համար՝ «մասնագիտական, 4-րդ»,
- 113-115-րդ կետերով նախատեսված պաշտոնների համար՝ «մասնագիտական, 6-րդ»,
- 124-րդ և 125-րդ կետերով նախատեսված պաշտոնների համար՝ «մասնագիտական, 7-րդ» պաշտոնների խմբերը և ենթախմբերը:

8. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 166-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ իրավունքի ուժով, ուժը կորցրած համարել Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2007 թվականի նոյեմբերի 15-ի «Դատական ծառայության պաշտոնների անվանացանկը և հաստիքների քանակը հաստատելու մասին» թիվ 16Ն և 2009 թվականի մայիսի 22-ի «Դատական կարգադրիչների ծառայության հաստիքների քանակը և պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին» թիվ 07Ն որոշումները:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2018թ. օգոստոսի 6
ք. Երևան